Բացի այդ, ամեն հարսանիքից՝ 10 ռ.

Բոլոր գութաններով վարել կալվածատիրոջ համար տարեկը 2 օր.

Նույնպես և ֆöխվայի համար՝ 1 օր.

Հնձելու և հավաքելու թե՛ կալվածատիրոջ և թե՛ ֆöխվայի արտերի բերքը։

Գյուղացիք պարտական էին մալուչֆվաքը[18] իրենց գրաստներով փոխադրել Շուշի և տալ որքան հարկավոր կլինի բանվոր՝ այգիներում աշխատելու, ճանապարհներն ու առուները նորոգելու համար։

Ամառը յայլաղ-ներում կալվածատիրոջ ձիերը հսկելու համար՝ երկու պահապան 20 օրով։

Նաև 10 հնձվոր սովորական օրավարձով, որոնց օրավարձը վճարում էր գյուղացիությունը։

Այսքան տուրքերի գանձումը և հասարակական աշխատանքների բաշխումը մի կողմից բարդացնում էին ֆöխվայի պարտականությունները, մյուս կողմից տալիս էին նրան այն ժամանակվա հասարակության մեջ բացառիկ դիրք, որը համայնքի կողմից անմիջական հսկողության բացակայության կամ թուլության հետևանքով ամեն անգամ ենթարկվում էր քմահաճույքի վերածվելու վտանգին։ Խանական կառավարության միջոցին գյուղական համայնքը չուներ կուռ կազմակերպված պատկեր։

Ռուսական պետությունը հենց սկզբնական տարիներից ձգտում էր պարզություն մտցնել առաջին հերթին պետության օգտին գանձվող տուրքերի մեջ, վերացնելով նրանցից շատ տեսակներ, մյուսները՝ դրամի վերածելով։ Միաժամանակ միջոցներ գործադրվեցին գյուղական համայնքին կալվածատերերից ավելի անկախ և ավելի որոշակի կազմակերպություն տալու։ Նույնիսկ այն ժամանակ, երբ 1847 թվին կալվածատերերին հատկացվեցին բավական լայն իրավունքներ գյուղական ներքին կյանքը ղեկավարելու գործում և նրանց վրա դրվեց անձնական պատասխանատվություն հասարակական անդորրության պահպանության համար, գյուղական համայնքին վերապահվեց ներքին կարգապահության, դատավարության և տուրքերի ներքին բաշխման մի հայտնի չափով ազատություն և ինքնուրույնություն։ Նաև ընդարձակվեց գյուղական պաշտոնավարների թիվը և ընտրական սկզբունքի կիրառումը։

Գյուղական համայնքը դառնում էր պետության կարևոր օղակը՝ նրա վարչական ամբողջ նոր կառուցվածքի մեջ։ Այդ տեսակետով առանձնապես կարևոր էր 1861 թվին կալվածատերերից բոլոր վարչական և դատական իրավունքների խլումը և այդ իրավունքների մի որոշ մասի գյուղական համայնքին հանձնումը։ Այդպիսով, նաև Զանգեզուրում, ինչպես և Անդրկովկասի այլ գավառներում, ռուսական միրապետությունը բերեց իր հետ գյուղական համայնքի ներքին կազմակերպվածություն, ինքնավարական իրավունքի՝ մի կողմից գյուղական համայնքի և մյուս կողմից գավառի վարչական, դատական և ֆինանսական մարմինների միջև իրավասությունների սահմանների և փոխադարձ կապի[19] ընդլայնում և պարզորոշում։

---

18 Մալուչֆաքը կալվածատիրոջը տրվող բնատուրքերն են։

19 Քöխվայի ընտրության քվեարկությունը կատարվում էր դեռ շատ երկար ժամանակ միևնույն նախնական ձևով։ Մեջտեղ դրվում էին թեկնածուների փափախները և նրանց մեջ էր գցվում քվեն՝ ոսկորիկը կամ կաղինը։ Քöխվի վարձատրությունը դրամով չէր տրվում, այլ նրա օգտին անվարձ աշխատանքով։ Յուրաքանչյուր տուն տալիս էր նրան մեկ մարդ մեկ օր նրա համար վարելու կամ հնձելու, իսկ միջի համար՝ մեկ կին աշխատող։ Ընտրություններին ամեն ծխից մասնակցում էր մեկ տղամարդ, սովորաբար ամենից հասակավորը, սակայն հաճախ նա, ով տան մեջ իր անհատական առավելություններով ավելի հեղինակություն էր վայելում։